№ 21. Յունիսի 7. — 1873 — Յունիսի 7. № 21.

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԳԻՆԸ։

Տարեկան գինն է 5 ռուբլի (փոստի ծախսով)։ Օտարաքաղաքացի բաժանորդները պիտի դիմեն այս հասցէով. Въ Типографію Армянской Газеты „Мшакъ“.

Թիֆլիսում կարելի է ստորագրվիլ խմբագրատան մէջ (Արծրունու տուն) և պ. Գատուրեանցի խանութում։

ՄՇԱԿ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ։

Մասնաւոր յայտարարութիւն տպել տուողը պիտի վճարէ 10 հասարակ տառի համար 1 կոպէկ արծաթ։ Յայտարարութիւններ տպվումեն Հայերէն, Ռուսերէն, Վրացերէն, Ֆրանսիարէն, Գերմաներէն և Թուրքերէն։

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կոսմոպոլիտութիւն։—Ներքին տեսութիւն։ Հայոց թատրոն։ Նամակ Ղուբայից։ Ներքին լուրեր։ — Արտաքին տեսութիւն։ Նամակ Փարիզից։ Նամակ Վիէննայից։—Խառն լուրեր։ — Առևտրական։ — Յայտարարութիւններ։ — Բանասիրական։ Մատենագրութիւն (վերջ)։

Խնդրում ենք այն մեր բաժանորդներից, որք մինչև այժմ „Մշակի“ այս տարվայ վճարը հատուցած չեն, ուղարկել խմբագրութեանը իրանց բաժանորդութեան գինը։

ԿՈՍՄՈՊՈԼԻՏՈՒԹԻՒՆ

I

Շատ վտանգաւոր բան է յանձն առնել ժողովրդին լուսաւորել և մի և նոյն ժամանակ բաւական հմտութիւն չունենալ այս կամ այն բառի միտքը և նշանակութիւնը անգամ հասկանալու։ Շատ վտանգաւոր է դուրս գալով գրականական ասպարէզը, պատրաստված չը լինել լրագրողի պաշտօնը խղճմտաբար կատարելու համար։ Սորանից հետևում է անդադար հակասութիւններ և անյաջողութիւն... Սորանից դուրս է գալիս որ ինքն զրողը հաստատ ուղղութիւն չունենալով, մոլորեցնում է և ընթերցողին։ Սորանից է ծագում այն ծիծաղելի երևոյթը որ մենք մի մտքի նշանակութիւնը ճշգրտութեամբ չը հասկանալով, վեց ամիս սորանից առաջ այս կամ այն գաղափար վնասակար էինք համարում, իսկ այսօր համարում ենք նոյն գաղափար օգտաւէտ և յարգելի...

II

Այդ տեսակ դիտական գաղափարներից մինը կոսմոպոլիտութեան գաղափարն է, որ ինչպէս և շատ ուրիշ գիտական—հասարակական մտքերը, շատերը մտքի բուն նշանակութիւն չը հասկանալով, վնասակար են առնուանում և 'ի հարկէ (որ միշտ յատկանիշ է խորին տգիտութեանը) իրանց ամենասուրբ պարտաւորութիւն են համարում հայհոյել,—միայն նրա համար որ չեն հասկանում...

Այդպէս էր ընթանում մարդկութիւնը իր պատմական ամբողջ ընթացքում,—նա հայհոյում էր այն ամենը, որ մտաւորապէս անպատրաստ լինելով, միջոց չունէր ըմբռնելու և հասկանալու...

III

Մի թէ ասելով բժիշկ ես պիտի հասկանամ՝ տգէտ, իր գիտութեան անհոգ, անխիղճ մարդ, մի թէ ասելով լրագրող, ես պիտի հասկանամ՝ անընդունակ, առաջադիմութեան անփոյթ, ծոյլ, յետադէմ էակ։ Մի թէ ասելով պաշտօնեայ, ես պիտի հասկանամ՝ անշարժ, խուարասէր անձն...ոչ, ինչպէս կան անպիտան բժիշկներ, կան և օրինաւորներ, եթէ կայ տգէտ լրագրապետ, կարող է լինել և բարեխիղճ, եթէ գտնվում են անշարժ և խաւարասէր պաշտօնեայք, կը գտնվին և շատ լուսաւորվածներ...

Կամ մի թէ կղերական խօսքով ես իրաւունք ունեմ կնքել մարդին յետադիմութեան դրօշմով։ Մի թէ հանրապետականը պիտի կարծի որ բոլոր միապետականները անպէտք անձներ են, իսկ միապետականը պիտի նոյնը ասի հանրապետականի վրա, ինչի՞ ուրիշի համոզմունքը և ուղղութիւնը անպատճառ պիտի ընդունենք վատ կողմից...

IV

Ինչի՞ ուրեմն կոսմոպոլիտ ասելով մենք պիտի անպատճառ ընդունենք այդ գաղափարը վնասակար կողմից, ի՞նչի պիտի հասկանանք անհիմն, վայրիվերոյ կոսմոպոլիտ և ոչ թէ օրինաւոր, հաստատ համոզմունք ունեցող...

Կոսմոպոլիտ բառով գիտական տերմինների անտեղեակ անձինքը առհասարակ հասկանում են այնպիսի մի անձնաւորութիւն, որ իր օջախը թողած կամենում է օգնել ուրիշին, իր հայրենակիցները, իր ազգութիւնը արհամարհելով, մտածում է ամբողջ մարդկութեան վրա....

V

Մենք չենք հերքում որ այդ տեսակ անհիմն, վայրիվերոյ կոսմոպոլիտներ կան, ինչպէս և չենք ուրանում որ կան լրագրապետները, պաշտօնեաները և այլ, որք արժանի չեն այդ կոչման, որ կան հանրապետականները որք վնասակար են, կամ պատահում են կղերականները, որք խաւարասէր են....և այլն

Բայց մի և նոյն ժամանակ պէտք է խոստովանենք որ վերև յիշված կոսմոպոլիտը արժանի էլ չէ այդ անուան։ Վերև նկարագրած կոսմոպոլիտը ոչ թէ կոսմոպոլիտ չէ, ոչ թէ վնասակար է, որպէս անհիմն կոսմոպոլիտ,—բայց և անպէտք է, որպէս մարդ։

Նրա ուղղութիւնը ոչ թէ միայն անհիմն է և վայրիվերոյ, բայց և բոլորովին հակառակում է ճշմարիտ կոսմոպոլիտութեանը։

VI

Ճշմարիտ կոսմոպոլիտը ունի թէև աչքի առաջ ամբողջ մարդկութեան երջանկութիւնը, բարձր է դասում մարդկութեան երջանկութիւնը քան թէ մի ազգութեան գոյութիւնը,—բայց նոյն իսկ այդ պատճառով երբէք չէ կարող արհամարհել անհատութեան երևոյթը։

Ճշմարիտ կոսմոպոլիտը ասում է՝ ես պիտի ձգտեմ ընդհանուր մարդկութեան երջանկութեանը, իսկ մարդկութիւնը կազմված լինելով առանձին անհատներից, որք են ազգութիւնները, ես պիտի իմ բոլոր ջանքս նուիրեմ նախ և առաջ մարդկութեան մասնաւոր անդամների (ազգութիւնների) բարեկամութեանը։ Բայց որովհետև ես չեմ կարող բոլոր ազգութիւններին օգնել, ես կ'օգնեմ միայն մի ազգութեան, այսինքն այն ազգութեանը, որին ես ինքս պատկանում եմ...

Օգնել մի ազգութեան, ծառայել մեկին,—նշանակում է օգնել և ծառայել ամբողջ մարդկութեանը, որովհետև այն ազգութիւնը ամբողջ մարդկութեան կազմվածքի մի մաս է։

VII

Եթէ ճշմարիտ կոսմոպոլիտը աչքի առաջն ունի ընդհանուր մարդկութեան օգուտը, նա չէ կարող ցանկանալ, որ մարդկութեան մի մաս, այսինքն այն ազգութիւնը որին նա իր ծագմամբ պատկանում է, հրաժարվեր իր առանձնութիւններից, իր անհատական կեանքից,—որովհետև մի ազգութիւն թուլանալով և անհետանալով վնասում է իր անկմամբ ամբողջ մարդկութեանը։

VIII

Ճշմարիտ կոսմոպոլիտութիւնը նայում է մարդկութեան վրա, որպէս մի մարմնի վրա, որ բաղկացած լինելով զանազան, այլ և այլ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Lettres du Maréchal de Moltke Sur l'Orient Traduit de l'Allemand. Paris 1872 *)

Մարաջախտ Մոլտքէն իւր նուրբ, հեռատես և թափանցիկ հանճարովն ըմբռնել է Ցաճկաստանի կեանքի պայմանները, ժողովուրդների միմեանց մէջ և առ տէրութիւնն ունեցած յարաբերութիւնքը, և համոզուել է թէ հայերը զօրքի մէջ առանձին բաժին պէտք է կազմեն. այդ դիտաւորութիւնը այլապէս գործադրելը վնասակար է, դուցէ և անկարելի։

Մոլտքէի բերած փաստերի վրա ուրիշ շատ փաստեր ևս աւելցնել կարելի է, եթէ խնդիրը ուրիշ կողմերից ևս քննելու լինէինք. բայց զարմանալին այն է, որ մեր Պօլսի եղբայրներից ոմանք, փոխանակ գործնական կերպիւ հարցին վերաբերելու, փոխանակ կեանքի էական երևոյթների վերա հիմնելու իւրեանց կարծիքները, վերացական և անգործադրելի «պարտք և իրաւունք» սկզբունքների վրա են հիմնում իւրեանց մտքերը՝ չգիտեմ պարզամտութեամբ, թէ խարդախութեամբ է սոցա արածը, որպէս զի տկարների աչքը չլացնեն այդ խօսքերով, և հզօրների քմաց հաճոյանան. այնու ամենայնիւ միշտ պարտաւելի և կասկածելի կմնան այդպիսի կարծիք յայտնողները, մինչև որ նոքա պարզ և չշափելի կերպով չբացայայտեն, թէ ինչ միջոցներով նոքա պէտք է հաւասարակշռութիւն հաստատեն պարտքերի և իրաւանց մէջ և ապահովացնեն նորան։ Այդ հարցի նկատմամբ Մեղուն (№ 2—1872) մի շատ վայրի վերոյ յօդուած էր տպել, որի մէջ տէրութիւնը գերդաստանի հետ էր համեմատում, արիւն թափելը իրաւունք էր համարում, և ապացուցանում էր թէ «տաճկաբնակ հայն ունի կարօտութիւն արիւն թողնելու»։

Իւր նամակների մէջ Մոլտքէն շատ անգամ նկարագրում է զանազան պատմական երևելի քաղաքներ, նոցա բնական գեղեցիկ դիրքը, յիշում է նոցա փառաւոր անցեալը և այժմեան անմխիթար վիճակը, զորօրինակ Պրուսան, նրա Մայր եկեղեցու մէջ, որտեղ ժողովել էին Նիկիոյ սուրբ Հարքը, Թուրքերն են իւրեանց նամազը կատարում (Ն. ԺԴ. 7071). Զմիւրնիայ իւր կլասիկական յիշատակներով և գենուացւոց ժամանակից մնացած աւերակներով (Ն. ԺԶ. 76)։ Հռոմկլայ՝ ինչտեղ զարմանք է յայտնում հին ժամանակ շինած հայոց վանքին և պատմում է, թէ վանքի վարդապետները ջրհոր են փորել 200 ոտնաչափ խորութեամբ, ինչտեղ իջնում է քարաժայռի մէջ քանդած բոլորաձև սանդուխքը «այդ վարդապետների գործը, աւելացնում է նամակագիրը, արժանի է իրենց նախորդներին» (Ն. ԻԲ. 212)

Օրֆա, հին Եդեսիայ, այստեղ յիշում է Աբգարի պատմութիւնը և անձեռագործ պատկերի Եդեսիայ բերելը (Ն. ԽԲ. 214)։ Դիարբեքիրը իւր մեծագործ աւերակներով և ողորմելի խրճիթներով. ամենից նշանաւոր է համարում այստեղ մի հին կամուրջի մնացորդը լայն կամարներով. «չգիտեմ, շարունակում է Մոլտքէն, ում պէտք է վերաբերել այդ յանդուգն շինուածքը, հին Հայաստանի արքաներին, Յունաց կայսրներին, թէ խալիֆներին» (Ն. ԽԳ. 220)։

Մայաֆարտին, հին Տիգրանակերտը, «Հայաստանի մայրաքաղաքը երբեմն հզօր արքաների, աշտարակները և պարիսպը դեռ կանգուն են։ Ամրոցի գլխաւոր աշտարակները գուցէ ցոյց են տալիս այն տեղը, ուր նստում էին Արտաքսերսի յաջորդները» (Ն. ԽԸ. 259)։ Ցետոյ պատմում է, թէ Ատանայի կողմերը տեղական իշխանութեան վերայութեամբը կարելի է ճանապարհորդել միայն Թոմարսէ քաղաքի հայոց եպիսկոպոսի հովանաւորութեամբը. նկարագրում է նրա վանքը, արած ընդունելութիւնը և եպիսկոպոսի ունեցած իշխանութիւնը (Ն. ԾԲ. 292)։ Եգին «հայերի մայրաքաղաքը. այդ կիրճի մէջ, Ասիայի այդ հեռաւոր անկիւնում՝ հայ սեղանաւորը պահում է. իւր հարստութիւնը, երբ որ նա գործերից հեռանում է, այստեղ է վերադառնում հայ ճարտարապետը, հայ վաճառականը և բեռնակիրը, որովհետև ըստ սովորութեան այստեղի երիտասարդները գնում են մայրաքաղաք, մնում են այնտեղ տասը տարի, կամ այնտեղ ժանտամահով են մեռնում, կամ հարստացած վերադառնում են իւրեանց հովիտը»։

Ամասիա և Եգին քաղաքները Մոլտքէն իւր տեսած քաղաքներից ամենագեղեցիկն է համարում. (Ն. ԾԸ. եր. 325)

Մոլտքէի նամակներից մեր քաղուածոյքը վերջացնելից առաջ, մտադիր ենք ծանօթացնել մեր կարդացողներին հեղինակի դատողութեանց և կարծիքների հետ Ցաճկաստանի 1836 թ. քաղաքական և զինուորական կացութեան և Մահմուտ Սուլթանի անձի և գործունէութեան մասին։

«Երկար ժամանակ, ասում է Մոլտքէն, արևմտեան ազգերի զօրքերը աշխատում էին սահման դնել մահմետական իշխանութեանը. այժմ եւրոպական քաղաքականութիւնը ճիգն է թափում ապահովացնել նրա գոյութիւնը։ Հեռու չէ այն ժամանակը, երբ որ երկիւղ էին կրում, որ մահմետականութիւնը, ինչպէս որ նուաճել էր արեւելքը, չարաչէ իւր իշխանութիւնը արևմուտքի մեծ մասի վրա։ Մահմետականները արդէն տիրել էին այն երկիրներին, ուր քրիստոնէութիւնը արմատացած էր արդէն շատ դարեր։ Առաքեալների երկիրները՝ Կորինթոսը, Եփեսոսը, Նիկիան, Անտիոքը, Նիկոմիդիան և Աղեքսանդրիան արդէն հնազանդել էին նոցա իշխանութեանը. քրիստոնէութեան օրօրոցը, Փրկչի գերեզմանը, Պալեստինը և Երուսաղէմը նոյնպէս նուաճած էին. նոքա վերջ դրին յունաց կայսրութեանը և իւրեանց մարգարէին նուիրեցին Սուրբ Սոփիայի տաճարը, ուր հազար տարի փառաւորում էին Քրիստոսի անունը։ Մահմետականները իւրեանց յաղթութիւնը հասցրին մինչև Զալցբուրգը. Հռոմների կայսրը փախաւ իւր մայրաքաղաքից, և փոքր էր մնում որ Վենետիայի սուրբ Ստեփանոսի եկեղեցին մզկիթ դառնայ։ Աֆրիկայի անապատներից սկսած մինչև Կասպից ծովը, Հնդկական Ովկիանոսից մինչև Ադրիական ծովը՝ բոլորը հնազանդում էին Սուլթանին. Վենետիկը և Գերմանացւոց կայսրը նորան հարկատու էին։ Միջերկրական ծովի ափերի երեք քառորդը նորա իշխանութեան ներքոյ էր. Նեղոսը, Եփրատը տաճկաց գետեր էին. Արշիպելագոսը, Սև ծովը տաճկաց լիճեր էին։ Հազիւ երկու դար անցաւ և Ցաճկաց տէրութիւնը քակտւում է և կարծես թէ մօտենում է իւր օրհասին։ Ցունաստանը ազատուեցաւ, Մոլտաւիան, Վալաքիան և Սերբիան ձևի համար են ընդունում Սուլթանի գլխաւորութիւնը և Ցաճիկները

(* Տես «Մշակի» № 20.

մասերից, իւրաքանչիւրը պիտի առողջ մնայ, որ ամբողջ մարմինն էլ առողջ լինի...

Կոսմոպոլիտութեան ուսումը անբաժանելի է անհատական սկզբից։

Ընդհանուր մարդկութեան երջանկութիւնը աչքի առաջն ունենալով, կոսմոպոլիտը ձգտում է իր նպատակին, դուրս գալով իր դատողութիւնների մէջ ազգութեան սկզբից, նա նայում է մարդկութեան վրա ազգութեան կէտից։

Ուրեմն որքան կը բազմանան կոսմոպոլիտները ամեն ազգութեան մէջ, այնքան կ'օգտվի իւրանչիւր ազգութիւնը,—ուրեմն կը շահվի և ամբողջ մարդկութիւնը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՕՆ

Հայոց Թատրօնը Թիֆլիսում տաս տարից աւելի գոյութիւն ունենալուց յետոյ, մի՞թէ պիտի հասնի այն եղբակցութեանը, որ նրա գոյութիւնը աւելորդ է մեր ժողովրդի պահանջների համար։ Ձենք կարծում։

Բայց այնուամենայնիւ մենք տեսնում ենք մի շատ անմխիթար երևոյթ։ Վերջին ժամանակ հայոց Թատրօնի ներկայացումներին շատ սակաւ հանդիսականներ են լինում, և որպէս լսում ենք ներկայացնողները երբէք այսքան վնաս կրած չեն, որքան այժմ։ Ինչով մեկնենք այս երևոյթը։ Ժողովրդի սառնութեամբ,—չենք կարծում, որովհետև եթէ ժողովուրդը սառն էր դէպի Թատրօնը, նա արդէն վաղուց պիտի ցոյց տար այդ սառնութիւնը։

Ժողովուրդը սիրում է միշտ նորութիւն։ Առաջին ժամանակները հայոց բեմը ինքն իր երևալովը նորութիւն էր ներկայացնում։ Փոյթ չէ ինչ էին ներկայացնում՝ „Հ՝ուշանիկ" „Արշակ բ." թէ ուրիշ բան։ Այժմ ժողովրդի թէ ճաշակը զարգացաւ, թէ արհեստական պիտոյքները ընդարձակվեցան։

Ժողովուրդը տեսաւ բեմի վրա Պէպոնեին, Յարութիւնների և այլ իրան մօտիկ, ծանօթ, իրական կեանքից վերցրած տիպերին...Նա ծիծաղեց, ծափահարեց կենդանի, ծանօթ, սրտին մօտիկ տիպերին, երևոյթներին և կեանքին բեմի վրա։ Մի՞թէ նրան կարող են Արշակները և Հ՝ուշանիկները նոյն չափով հետաքրքրել ինչպէս առաջ...

Զարմանալի է որ մեր դերասանական խումբը գովելի ջանք է գործ դնում և թարգմանական պիէսներ տալ, բայց չէ կարելի ասել որ թարգմանութիւնների ընտրութիւնը միշտ աջող է լինում։

Ինչպէս չը համակրել Հիլլերի „Ազատները" անմահ պիէսայի թարգմանութեան մեր լեզվով և նորան մեր բեմի վրա ներկայացնելուն։ Բայց մի և նոյն ժամանակ ցաւելով պիտի ասենք որ այդ տեսակ բարձր արհեստական գրվածները բեմի վրա մեր հասարակութիւնը չէ գնահատում։

Եթէ Հիլլերի ու Հէկսպիրի գրվածները մինչև անգամ Ռուսաստանի մայրաքաղաքների բեմի վրա ներկայացրած ժամանակ, ժողովուրդը դարձեալ քիչ է լինում, թէև ժողովուրդը առաւել զարգացած է, քան թէ մերը,—ուր մնայ որ մեզանում նրանք աջողվէին։ Այնուամենայնիւ մենք յայտնում ենք մեր կատարեալ համակրութիւնը այդ տեսակ թարգմանութիւններին, և համոզված ենք, որ նրանց ներկայացնելով աւելի հանդիսականներ կունենան մեր դերասանները քան թէ հայ ողբերգական պիէսները և կամ միշտ մի և նոյն վոդեվիլները, ինչպէս „Պառաւներուն խրատ" և այլն։

Ցանկալի կը լինէր որ մեր դերասանները, տարվայ այն ամիսներին, երբ չեն ներկայացնում, աշխատէին թարգմանել կամ թարգմանել տալ եւրոպական և ռուս լեզվից այնպիսի պիէսները, որք իրանց ժամանակակից բովանդակութեամբ ընդհանուր կրթողական նիւթ ունեն և կարող են վերաբերել առհասարակ ամեն մարդկային հասարակութեան որ ազգութեան և պատկանէր նա։

ՆԱՄԱԿ ՂՈՒՐԱՑԻՑ

Անցեալները «Մշակի» 2-ը համարին մէջ Զ...ց Ս...ի ճանապարհորդութեան նկատմամբ մի նոր տեղեկութիւն էր տպուած։ Շուշուց «Մեղուին» գրուած մի նամակ այդ մասին բացատրութիւն կպահանջէր։ Իսկ այդ մասին իմ վաղուցուայ ունեցած տեղեկութիւնը յայտնելու առիթը ունեցայ։

1867 և 68 թուականներին Երևանայ Հոգևոր դպրոցումն պատմութեան և աշխարհագրութեան դասատու էի։ Այդ քաղաքի կլիման ինձ վնասեց։ Բժիշկների խորհրդով Վայոց ձորի (այժմ Դերելեկեղի) հանքային ջրերը գնացի, ուր առ ժամանակ մնալէն յետ, նոյն գաւառի Մալիչկա գիւղի Տէր Ա...ի տանը հիւր մնացի, որոյ որդին Երևանայ Հ. դպրոցի աշակերտ էր։ Միւս տարին արձակուրդի ժամանակ նորէն գտնուեցայ Տէր Ա...ի տանը հրաւիրուելով նրա որդուց։ Իսկ վերջին անգամ ինձ ղրկեց այնտեղ Ալեքսան Ռենար անունով գաղղիացին ճղոպուրի կոճղներ որոնելու։

Այս այցելութիւնները ինձ Վայոց ձորի հետ լաւ ծանօթացրին, որուն վրա ասա ուզղակի խօսելը մեր նպատակէն դուրս է։ Նա՝ իր մէջ 35 Հայ գիւղեր ունի, որոնց երկուսը կամ երեքը բընակիներ են, իսկ մնացորդքը Պարսկաստանից եկած գաղթականներից են։ Նոցա կենաց ամեն կողմերը թշուառութեան մէջ կլողան։ Այնտեղ ամէն բան նահապետական ժամանակներին կհասնի։ Ուրիշ բաների հետ նոցա հովիւներն ալ Հայ քահանային յատուկ եղած դրութեան մէջ են։

Ամեն փոքր ի չատէ ընթերցասէր Հային ծանօթ կլինի անչուշտ Պետրոս Մաղաթեանցը Սեյդ մականուանեալ Հայը, որ երբեմն եղած է մովրով Վայոց ձորին, ուր իր բոլոր գտնուած ժամանակը տևած է հինգ վեց տարի։ Նա՝ տղայ զաւակ չունէր։ Նորան աղջիկը ամուսնացած է Ալեքսան Աղա Բաբայեանցի հետ, որ Ալեքսանդրապօլու նշանաւոր գերդաստաններից մէկն է։ Այս ամուսնութեան ժամանակ, Նորան եղբայր Յովհաննէս Բաբայեանցը, 19 կամ 20 տարեկան հասակաւ, գաւառական դպրոցումը իւր ուսումն, և եթէ սխալ չեմ պ. Արապաճեանցից հայերէն լեզուն սովորելով՝ առանձին կերպով պատրաստվում էր բարձրագոյն դպրոց մտնելու։ Ահաւասիկ հենց այս միջոցներին նորա հայրը, հանդուցեալ Յակոբ Աղա Բաբայեանցը, իր խնամի պ. Մաղաթեանցից ստացաւ մի նամակ, որուն մէջ ուրիշ խօսքերի հետ նա ասում էր թէ՝ «ես տղայ զաւակ չունեմ, ղրկիր Յովհաննէսին ինձ մօտ, նա՝ կլինի իմ որդին և ես գուցէ քեզնից առաւել հեշտ կերպով կառաջնորդեմ նորան դէպի բարձրագոյն դպրոց»։ Այս հրաւերքէն երկու կամ երեք ամիս յետոյ պ. Յ. Բաբայեանցը Վայոց ձորումն էր։

Հենց այս ժամանակներին Ս. Զ...ցը հիւր եղաւ հայազգի աստիճանաւոր և բոլոր Երևանայ նահանգին յայտնի՝ Ռըթոյ բեկի 1) ամարանոցին, ուսկից նա մի ձիաւորի ձեռամբ մի նամակ ղրկեց Քեչիշքենդ (որ առհասարակ գաւառի կառավարչաց բնակութեան տեղին է) Մաղաթեանցի վրա և խնդրեց որ նա իւր որդեգիր Յ. Բաբայեանցին ղրկէ Ռըթոյ բեկի ամարանոցը։ Մի ուրիշ նամակաւ Ս...ը մի և նոյն ժամանակն հրաւիրեց Տէր Ա... և Տէր Ա... քահանայից, որոնք ի հարկէ նրան վաղուց ծանօթ կը լինէին։

Այս անցքէն երեք կամ չորս օր յետոյ հրաւիրուած անձինքը Ս. Զ...ցի մօտ էին։ Այստեղ նա խնդրեց պ. Յ. Բաբայեանցին իրան յատուկ ոճերով՝ շրջակայել Վայոց ձորի նախնեաց յիշատակարանները, նկարագրել, գրածը կարգի դնել և ի վարձ այս աշխատանաց խոստացաւ նորան իր ծախսով ղրկել բարձրագոյն դպրոց։ Իսկ պ. Յ. Բաբայեանցը, իր ցանկութեան մօտիկ կատարումն այս կէտին մէջ տեսնելով ընդունեց Զ...ցի առաջարկութիւնը։ Իսկ քահանայից, Ս...ը խնդրեց, կամ աւելի լաւ է ասել հրամայեց մանգալ պ. Յ. Բաբայեանցի հետ և օգնել նորան գլխաւորապէս երեք բանի մէջ—արձանագրութեանց կարդալու դժուարութեանց (որուն մէջ երկու քահանայքն ալ խիստ վարժ էին) ամեն մի յիշատակարանի վրայօք պատմուած աւանդութեանց ստորագրելուն և ճանապարհներին առաջնորդ լինելուն մէջ, իբրև իրանց երկրումն։

Ուղիղն ասելով, նոյն իսկ Մաղաթեանցն քիչ օգուտ չբերեց այս ձեռնարկութեանը, որուն վրա Ս. Զ...ցը իր հիւրերին ճանապարհ դցելիս առանձին յանձնարարական նամակ էր գրած։ Նա նշանակեց չորս ձիաւոր մինչև գործքի վերջն այդ երեք անձանց հետ մանգալու։ Ամաղու վանուց թագաւորաց չիրիմները, որոնք փոչիներու տակ ծածկուած էին, նա ինքը իր բռնած մշակների հետ բաց արաւ և ինքն ստորագրեց նորանց։ Իսկ ինչ որ վերաբերում է այս ճանապարհորդութեան ծախսին, դա ամենքին հասկանալի է։ Մանեկողքն մովրովի մարդիքն էին։

Ահա թէ ովքեր են եղած Վայոց ձորի ճանապարհորդքը։

Արդ՝ չնայելով բանի այս իսկութեան, չնայելով որ Ս. Զ...ցի ոտքի Վայոց ձորի հողին անգամ չդպչելուն. նա՝ ասում է «այս ինչ տեղ այսպէս երեսիս վերա անկայ լաց էլայ. այն ինչտեղ այնպէս արեցի և այլն»։ Սակայն մեր պատմածը երկու անգամ երկու՝ չորս լինելուն պէս է։ Մեր պատմածը այնքան ճշմարիտ է, որ ոչ թէ 10 կամ 20 մարդիք, այլ ամբողջ գաւառից վկայվում է։ Ամեն օտար մարդ այնտեղի աւերակների մինի մօտ կանգնելիս՝ կլսէ ամեն անց ու դարձ անողից, մինչև անգամ Թուրքից, որ իրան լեզուաւ ասում է «Աղա դրանց ամենքն ալ Մաղաթով Մովրովի որդին Մալիչկի Տերտէրների հետ գրուեցին տէրութեան համար»։

Քահանայքը ճանապարհորդութեան տպուելէն յետ մի մի գիրք ընծայ ստացան։ Իսկ Յովհաննէս Բաբայեանցը դեռ սպասում է համալսարան գնալու։

Յակոբ Կարապետեանց

1) Վայոց ձորի հիւսիսային կողմումն է Գեղամայ ծովին մերձ եղած նշանաւոր ամարանոցները, ուր ամեն տարի մեծ բազմութիւն են հավաքվում իրանց անասուններով։ Այստեղ է և Ռըթոյ բեկի ամարանոցը, որ նշանաւոր Գավառու հայաբնակ գիւղի երևելի դերդաստաններից մէկն է։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Փոխարքայի Գլխաւոր վարչութեան պ. կառավարիչը (նաչալնիկ գլաՎնավո ուպրավլենիա) յունիսի 13-ից կընդունի խնդրատուներին կօջորում չորեքշաբթի օրերը առաւօտեան 9 ժամից։

***

Խասաւ-իւրթից գրում են մեզ՝ մեր Խասաւ-իւրթը գրեթէ գիւղ է և ոչ թէ հայոց այլ ազգորուած են այդ բոլոր գաւառներից, որոնք նոցա էին պատկանում։ Ասորիքը՝ Ատանա և Կրետոս կղզին, որոնց տիրեցին 55 յարձակումներից և 70 հազար մահմետական զոհելուց յետոյ, առանց կռուի անցան ապստամբ փաշայի իշխանութեան ներքոյ։ Վերջապէս Արաբատանի և մինչև անգամ սուրբ քաղաքների վրա Սուլթանի իշխանութիւնը մի ժամանակ թուլացած էր. մնացած երկիրների մէջ ևս նորա իշխանութիւնը սահմանափակուած է։ Տաճկաստանը կարող չէ այնքան կանոնաւոր զօրք պահել, որ պաշտպանել կարողանայ իւր լայնատարած տէրութիւնը. ուրեմն որքան մեծ նշանակութիւն ունի Տաճկաստանի համար աշխարհախումբ զինուորութիւնը, բայց այսպիսի մի զինուորութիւն կազմելու համար հարկաւոր էր որ կառավարութեան և կառավարեալների օգուտները մի լինէին։ Ամենից առաջ տէրութիւնը կարօտ է բարեկարգ վարչութեան. եկամուտների նուազիլը պարզ ցոյց է տալիս երկրի հետզհետէ աղքատանալը. փաշաները կողոպտում են գաւառները, ստորադրեալը առանց ընծայի կարող չէ մօտենալ իւր մեծաւորին, և աղերսագիր տուողը առանց ընծայի դատաւորին։ Ցունաց դէմ դատերը, հայերի ապօրէն հալածմունքը, տաճկաստանի այդ հարուստ և հաւատարիմ հպատակների, և այլ անարդար ու խիստ միջոցները միանգամայն յուսահատեցնում են ժողովրդին. ձեռակերտ արուեստները, վաճառականութիւնը և հողագործութիւնը խեղճ վիճակի մէջ, գաւառների մէջ ոչ ոք չէ պարապում հոգագործութեամբ, որովհետև տէրութիւնը գնում է ցորենը իւր նշանակած գիներով. գիների այդ նշանակելը աւելի մեծ վնասներ է պատճառում երկրին, քան թէ հրդեհները և ժանտախտը ի միասին առած. որովհետև տէրութիւնը չատ անգամ ցորեն է գնում Օդեսայից, այն ինչ մայրաքաղաքին կից լայնատարած և պտղաբեր դաշտերը անմշակ մնում են։ Ապագան ցոյց կտայ թէ արդեօք մի տէրութիւն կարող է ոտի կանգնել իւր անկման միջոցին, թէ Բուլղանդիայի մահմետական տէրութիւնը այնպէս պէտք է կործանուի՝ որպէս քրիստոնէականը, իւր վարչութեան պատճառով։ Եւրոպայի անդորրութեան համար այնքան վտանգաւոր չէ տաճկաստանի նուաճուելը որ և իցէ օտար տէրութեան, քան թէ նորա ծայրագոյն թուլութիւնը և ներքին լուծումն (Նամ. Ժ. եր. 47—54)

«Սուլթան Մահմուտը, ասում է Մոլտքէն, իւր երիտասարդութիւնը անցրեց փակուած հարեմի մէջ, մի քանի մոլլաների և կանանց շրջանումը. նա չգիտէր ոչ մի եւրոպական լեզու, ոչ մի գիտութիւն, և ուսել էր միայն քորանը։ Այդ վիճակի մէջ, 23 տարեկան հասակումը ապստամբութիւնը նորան լոյս աշխարհ հանեց. ապստամբեալների բոլոր պահանջներին զիջանելուց յետոյ, նոցա իւր հարազատ եղբայրը զոհելուց յետոյ, նա աթոռ նստաւ։ Դորա թագաւորութիւնը նշանաւոր է նորանով, որ սորա օրով քրիստոնեայ հրպատակ ազգերը զարթնել և հոգի առնուլ սկսեցին. 18 տարուայ թագաւորութեան ժամանակ փորձը համոզեց նորան, որ չէ կարող շարունակել իւր թագաւորութիւնը հին հաստատութիւնների միջնորդութեամբ, թէ նա պարտաւոր է, վտանգի մէջ ձգելով իւր իշխանութիւնը և կեանքը անգամ, փոխել այդ վիճակը. այդ նպատակին հասնելու համար, նորան պէտք էր կործանել տէրութեան մէջ գտնուած բոլոր հակառակորդ ուժերը, նորան պէտք էր առաջ հարթել երկիրը և ապա նոր շինուածք կուռուցանել. նա իմաստութեամբ և հաստատուն կամքով կատարեց առաջինը՝ ցիրուցան ու բնաջինջ անելով ենիչար զօրքը, բայց թոյլ գտնուեցաւ և չը կարողացաւ գլուխ բերել երկրորդը։ Իւր ազգի մէջ Սուլթան Մահմուտը ոչ մի մարդ չը գտաւ, որ օգնել և առաջնորդել կարողանար նորան այդ նորաձևութեանց մէջ. դժուար է երևակայել, որքան ստորին էր արևելքում կրթութեան աստիճանը. տաճիկը, որ գրել կարդալ գիտէ, արդէն ուսումնական էր համարվում, բարձր պաշտօնեաների մեծ մասը իւրեանց նամակները ուրիշներին էին կարդալ տալիս. բացառութիւն միայն այն մարդիկը են կազմում, որոնք Եւրոպայում են ստացել իւրեանց կրթութիւնը. դրա ապագայում մեծ նշանակութիւն կստանան։ Սուլթան Մահմուտը ցանեց այդ սերմերը, բայց նորան վիճակած չէր քաղել նոցա պտուղները։ Մնում էր ուրեմն դիմել օտարազգիների գործակցութեանը. բայց Տաճկաստանում ամեն բան կասկածելի է, ինչ որ օտարներիցն է առաջ գալիս։ Տաճիկը կարող է ընդունել եւրոպացւոց գերազանցութիւնը գիտութեան, հարստութեան, զօրութեան կողմանէ, բայց թէ մի եւրոպացի կարող է հաւասար համարուել տաճիկին, նա այդ երբէք ընդունել կարող չէ։ Կրօնքն է սորա պատճառը. իսկ հետևանքը այն է՝ որ եւրոպացիներից նոքա միայն մնում են Տաճկաստանում, որոնք յանձն են առնում ենթարկուել ամեն տեսակ անպատուութեանց. և աստիճանները եւրոպացիներից ճանաչում են ըստ մեծի մասին միայն դատարկաշրջիկ խաբեբաներին, որոնց համար Բերայի և Ղալաթիայի թաղերը աւետեաց երկիր է։

Երբոր Պետրոս մեծն նորաձևութիւններ մուծանելու ձեռնամուխ եղաւ, Եւրոպայում ոչ ոք չգիտէր թէ ինչ է անցանում Ռուսաստանում. հետևանքները միայն ցոյց տուին այդ ձեռնարկութեան նշանակութիւնը. այդ վիճակի մէջ չէր Տաճկաստանը։ Բոլոր Եւրոպան հոգս էր քաշում և մասնակցում էր Տաճկաստանի նորաձևութեանը մինչև անգամ աւելի քան թէ նոյն ինքն Տաճկաստանը. իւրաքանչիւր տէրութիւն ցանկութիւն էր յայտնում Տաճկաստանը ամրացած և ծաղկած վիճակի մէջ տեսնել. բայց ամեն մէկը այլապէս էր ներկայացնում այդ վիճակը, այդ պատճառով եթէ մէկը մի բան է առաջարկում, միւսը հակառակում է։ Օտար տէրութեանց ազդեցութիւնը այնքան զօրեղ էր, որ Սուլթանը տէր չէր իւր Մայրաքաղաքումը անգամ, եթէ գործը մի եւրոպացու էր վերաբերում։ Սուլթանը մի և նոյն ժամանակ և խալիֆ է, և այդ պատճառաւ մանաւանդ պարտաւոր է հսկել օրէնքի խստութեամբ կատարելու վրա. բայց այդ օրէնքն գլխաւոր արգելք է ազգի մտաւոր զարգացմանը և նիւթական բարօրութեանը։

Խալիֆը եթէ կամենում է իւր տէրութեան Սուլթանը լինել, պէտք է խախտէ, նուազեցնէ Իսլամի ազդեցութիւնը, բայց դա է նրա իշխանութեան աղբիւրը և հիմքը։ Մեծ էին և բազմաթիւ այն արգելքները որոնց հանդիպեց Սուլթանի ձեռնարկած գործը. նա թողեց տէրութիւնը ողորմելի վիճակի մէջ, որ թոյլ էր իբրև մանուկ իւր նոր հաստատութիւններովը, որոնք դեռ չէին արմատացել. որ տկար էր իբրև ծերունի իւր հին հաստատութիւններով, որոնք կորցրել էին իւրեանց կենսական ուժը։

Պատմութեան անաչառ դատաստանը Պետրոս մեծին աւելի բարձր կը դասէ քան թէ Սուլթան Մահմուդին, բայց նա կը վկայէ մի և նոյն ժամանակը թէ Սուլթանի գործը անհամեմատ աւելի դժուար էր քան թէ Ռուսաց թագաւորինը (Նամ. Ժե եր. 373—085)։

***

ռուսաց, որտեղ կան հաղիւ տասը տուն Հայ բնակիչ,—և այդ տասը տուն բնակիչքը այս տարի մի ուսումնարան բացին։ Ուսումնարանի արդիւնքը գոյացաւ յօժարակամ նուիրատուութիւններից և մեր Օկրուգեան նաչալնիկը պ. Ս. Դ. Իւղբաչեանցը իր ռօճիկի մի մասից, յանձնառու է եղել ուսումնարանի ծախսը ծածկելու։ Այն ինչ մեր հարուստներից մինը մի կօպէկ չէ տուել, չը նայելով որ ինքն էլ երեխաներ ունի։

***

Մենք ստացանք Բագուից «Հաչիւ, կամ համառօտ նկատողութեան Մարդասիրական ընկերութեան. յօրինեաց նոյն ընկերութեան անդամ և ատենադպիր Սերգէյ Մ. Վարշամեանց, 1873 թ. Բագու։—Ցաւում ենք, որ մեր լրագրի դիրքը փոքր լինելով, մեզ դժուար կը լինէր տպել մեր էջերի մէջ ամբողջ հաշիւը, բայց ընկերութեան չրջաբերականը կաշխատենք հետևեալ համարներից մինում տպագրելու։ Հաշվից երևում է որ 1870, 1871 և 1872 տարվայ մուտքը ընդ ամենը եղել է 33851 բուբ. 83 կօպ.։ Ծախսը եղել է նոյն միջոցում՝ 8763 բ. 20 կօպ.։ Ծախսը հանելով եկամտից մընում է զուտ 25088 բ. 63 կօպ.

***

Биржа լրագիրը հաղորդում է, որ Պարսից Շահը իր երկիրը վերադառնալու ժամանակ պիտի անցնէ Փոթիով և Թիֆլիսով։

***

Ռուս Голосъ լրագիրը հաղորդում է որ Կիէվ քաղաքի փօստից գողացան մի ծրար, որ պարունակում էր 92 հազար բուբլ։ Կասկածում են այդ գողութեան մէջ Պրավէդնիկով անուն նամակաբերին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՓԱՐԻԶԻՑ

Երեկ Ֆրանսիայի քաղաքական կեանքում մեծ փոփոխութիւն է պատահել։ Թիէրը հրաժարական տուեց իր պաշտօնից, նա այլ ևս Ֆրանսիական հանրապետութեան նախագահ չէ, նա ընկաւ միապետական կուսակցութեան հարուածների տակ։

Երբ որ վեց օր սրանից առաջ Ազգային ժողովը բաժանվեցաւ տօների պատճառով և արձակուրդ առաւ քանի մի շաբթով, Թիէրի բարեկամներից մինը ասեց՝ այս շաբաթը կը լինի Ֆրանսիայի համար պատմական շաբաթ։ Այդ նախագուշակումն արդարացաւ։ Բայց հարկաւոր չէր Թիէրի բարեկամ լինել, այսինքն տերութեան մտերիմ մարդ, Թիէրի գործունէութեան անհին լինելը հասկանալու համար։ Ոչիչ կը չէր կարող ունենալ նրա գործունէութեան եղանակը։ Անդադար տատանման գրութիւնը զանազան կուսակցութիւնների մէջ, ցանկութիւնը բարեկամական յարաբերութիւնները ամենքի հետ պահելու,—անդադար զրդռում էր ինչպէս նրանց, որք օգնութիւն էին խնդրում նրանից միապետութիւնը վերականգնելու, նոյնպէս և նրանց, որոնց նա խոստանում էր հաստատել հանրապետութիւնը և որոնց միշտ խաբում էր։ Այդ թէ ուշ այդ կուսակցութիւններից մինը ոյժ ստանալով, պիտի փորձէր կառավարութիւնը իր ձեռք զցելու և Թիէրին պաշտօնից հեռացնելու։

Հանրապետականները փոքր թուով են ազգային ժողովի մէջ, բայց երկրի մէջ նոքա բազմաթիւ են, կազմում են ոյժ և ամբոխը նրանց կողմն է բռնում։ Այդ բոլոր գիտեն և տեսնում են, թէ միապետականները թէ պ. Թիէրը։ Բայց չը նայելով այս բանին, հանրապետականները չէին կամենում խանգարել երկրի հանգստութեանը մինչև որ Ֆրանսիայի մի մասը թշնամական զօրքով էր բռնած, մինչև որ Գերմանիային պարտքը դեռ ամբողջութեամբ վճարած չէր։ Նրանք սպասում էին որ գերմանական զօրքը հեռանայ, գիտենալով որ այն ժամանակ կամայ ակամայ ազգային ժողովը պիտի ցրվէր և ժողովուրդը պիտի նորը ընտրէր։ Նրանք գիտէին որ այդ նոր ազգային ժողովի մէջ նրանց կուսակցութիւնը բազմութիւն կը կազմէ, որովհետև իրանց կողմն էին տեսնում ամբողջ երկրի համակրութիւնը։ Վերջին ընտրութիւնները սրա համար թող օրինակ լինին։

Այդ բոլորը նրանք գիտէին, բայց մի բան չը գիտէին, կամ մի բանի վրա ուշադրութիւն չէին դարձնում, այդ այն է, որ միապետական, կղերական, պահպանողական կուսակցութիւնն էլ այդ բոլորը շատ լաւ գիտէ։

Վաղուց է արդէն այդ կուսակցութիւնը նկատում է, որ Ֆրանսիան նրանից հրաժարվել է։

Ութսուն տարի սրանից առաջ Բուրբոնեանները ընկել էին։ Յեղափոխութիւնը նրանց գահից զրկեց, դվնատեց Լուի XVI և հաստատեց Ֆրանսիայում հանրապետութիւնը։ Նապոլէօն Ա-ը երևաց և յանուն հանրապետութեան իր ձեռքը գցեց իշխանութիւնը։ Պատերազմների անվերջանալի շարքը միջոց չը տուեց Ֆրանսիային իր խելքը հաւաքելու. նա ամեն տեղ գնում էր ուր որ նրան տանում էր իր երևակի զօրապետը և առաջ քան թէ յայտնվէր խաղաղութիւն և երկիրը կարողանար քննել իր դրութիւնը և փոխարէնը տալ այն մեծ խաբեբային, Նապոլէօնը աքսորվեցաւ երկրից օտարների զօրքի օգնութեամբ և ուղարկվեցաւ պանդխտութիւն։

Գահը դարձեալ բռնեցին Բուրբոնները, թէև կարճ միջոցով։ 1830 թուին մի նոր յեղափոխութիւն նրանց էլ աքսորանք ուղարկեց օտար երկիրները։ Դու եթէ այդ անգամ չը հրատարակվեցաւ հանրապետութիւն, պատճառը այն էր որ Ֆրանսիան խաբված էր։ Նրան ասացին ածէ մի թէ այդքան արիւն թափել կառավարութեան այս կամ այն ձևի համար. քեզ հարկաւոր է խաղաղութիւն և հանգստութիւն։ Վեր առ ահա այդ նոր միապետութիւնը հանրապետական հիմնարկութիւններով և օրէնքներով և դու բաղդաւոր կը լինես։ Այդպէս էին խօսում այն մարդիկը որոնց Ֆրանսիան հաւատում էր։ Նա հաւատաց նրանց և ընդունեց Օրլէանեան հանրապետական միապետութիւնը։ Տասն և ութ տարի նրան հավերիկում յետոյ, նա վերջը հասկացաւ թէ ինչ բան է այդ հանրապետական միապետութիւնը և մի օր, 1848 թուին նոր յեղափոխութիւն արաւ,—և ուղարկեց Օրլէաններին էլ աքսորանք իրանց պանդուխտ ազգականներին մխիթարելու...

Ֆրանսիայում նորից հիմնվեցաւ հանրապետութիւնը, բայց ոչ երկար ժամանակով։

Մեծ հօրեղբոր փոքրիկ եղբօր որդին, որ անաղնութեան մէջ գերազանցում էր առաջինից, ներկայացաւ հանրապետութեան առաջ, երդում տուաւ նրան միշտ հաւատարիմ մնալու, ընտրվեցաւ նախագահ,—և երեք տարից յետոյ իր ձեռքը գցեց իշխանութիւնը իրան կայսր յայտնելով։ Դու միայն քսան տարվայ տանջանքներից յետոյ, Ֆրանսիան կրկին շունչ քաշեց։ Նապոլէօնեան ցեղը գահից գլորվեցաւ և դարձեալ յայտնվեցաւ հանրապետութիւնը։

Բաւական է, բաւական է, ասում էր մաշված, ոյժից ընկած Ֆրանսիան, մենք փորձեցինք ամեն եղած կառավարչական ձևերը և դեռ երբէք այնքան երկար պահպանված չենք հանրապետականը որ նրա մէջ էլ փորձվենք։ Փորձը սկսվեցաւ։ Նա գնալով աջողվում էր և երկրի համակրութիւնը նրանով աստիճանաբար գրաւվում էր։ Աղերական—միապետական կուսակցութեան և ժողովրդի մէջ բոլոր կապերը կտրված էին, երկիրը ինքն նախադծեց իր համար ընթացքը և այլ ևս չէր կամենում դայլակներ ունենալ։ Նա իրան բաւական ուժեղ էր զգում իր սեփական ոտների վրա կանգնելու համար։

Այդ տեսակ դրութեան մէջ ի՞նչ պիտի անէին միապետականները, որք առանձին հանգամանքների շնորհով բազմութեան մէջ յայտնվեցան Ազգային ժողովում։

Մի թէ ուրիշ անգամ նրանք կարող էին յուսալ ազգային ժողովի մէջ այդ բազմութեամբ ընտրված լինելու։ Ոչ, նրանք այդ լաւ գիտէին և վճռեցին այլ ևս չը սպասել։ Իւրաքանչիւր լոսկն նրանց համար թանգ էր և նրանք հասկացան որ գուցէ աւելի յարմար ժամանակ չեն գտնի իշխանութիւնը իրանց ձեռքը զցելու։ Այսօր էգուց գերմանական զօրքերը պիտի հեռանային, և այն ժամանակ հանրապետականները հիմնվելով ազգի համակրութեան վրա, կը պահանջէին որ ներկայ ազգային ժողովը ցրվի։

Ֆրանսիայի քաղաքական կեանքից դուրս ապրելը, անփոխելի անհրաժեշտութիւնը իրանց նպատակները մի կողմ դնելու, փառասիրութեան զգացմունքը յաւիտենից թաղելու,—հաճելի չէր կարող լինել եռութեան հերոսներին։ Նրանք վճռեցին փրկել Ֆրանսիան, զցելով իրանց ձեռքը քաղաքական իշխանութիւնը։

Ահա պատահած երևոյթի գլխաւոր պատճառը։ Ինձ կը մնայ այժմ պատմել պատահած փոփոխութեան մանրամասնութիւնները։

Փարիզ, մայիսի 25. Պ. Իզմ.

ՆԱՄԱԿ ՎԻԷՆՆԱՑԻՑ

1873 թուին մայիսի մէկին, կէսօրին թնդանոթների դղրդիւնի, շատ հաղարաւորների ցնծութեան աղաղակի և երդեցող դասերի մեծ աղմուկի մէջ բարձրացրուց Աւստրիայի կայսր Ֆրանց Իոսէֆ 1-ը իր ձայնը և հետևեալ խօսքերով «ես յայտնում եմ 1873 թուականի աշխարհահանդէսը բաց արած» նշան տուաւ աշխարհին մի ընդհանուր ուխտադնացութեան դէպի Վիէննա։

Թէ ինչ նշանակութիւն այս ուխտադնացութիւնը պէտք է ունենայ պատմութեան մէջ, բաւական է գոնէ յիշել որ բացի տանուտէրից, կայսր Ֆրանց Իոսէֆ ա-ից իր ընտանիքով, ներկա էին բոլոր աշխարհի տիրապետողների ներկայացնողները, որոնց մէջ տեսնվում էին Պրուսիոյ Տէրութեան թագաժառանգը իր ընտանիքով, Ուէլսի Պրինցը, Դանիայի թագաժառանգը, Օլդէնբուրգի մեծ դուքսը և ուրիշ հարիւրաւոր ազգերի ներկայացուցիչները և իշխանները.

Թէև տասնուչորս օր այս մեծ տօնակատարութիւնից անց է, բայց ուղիղն ասած էս օր էլ դեռ հանդէսը այնպէս կարգի չէ ընկած որ կարելի լինի ասել թէ արդէն պատրաստ է. թէև երկու տարից աւելի հազարաւոր հանճարներ և մշակներ ամեն ազգեր երկրագունտի այս մի աննշան տեղի վրա աշխատել են, բայց դեռ ևս բոլորովին կատարելագործուած չէ։ Այստեղ ուղարկած ապրանքի մի մասը դեռ կամ արկղների մէջ և կամ երկաթուղու կայարանն են ուր ինչպէս այսօրուայ օրագիրը հաղորդում է մօտ 1000 լի կառք, սպասումն հերթին աշխարհանդէսի ասպարէզը մտնելու։ Ամեն երկրի մասերումն նկատում է իւրաքանչիւր ժամ մի մեծ յառաջադնացութիւն կարգ դնելումն, մի քանի երկրի մասերը կարգի են ընկել միւսի մէջ նկատում է կարգ ընկնելումն մօտենալը, երբորդը դեռ նոր է սկսել, չորրորդը մտածում է դեռ դարդակ տեղերին և պատերին իր երկրի արհեստի և պտուղի բերքերով ինչ ձև տալուն վրա, հինգերորդի հետքը դեռ ևս չէ երևում և այլն, կարճ ասած, դեռ ևս մի քառսի է նմանում, որից մի քանի օրից յետոյ մի աշխարհ պէտք է ստեղծուի։—Այս աշխարհի սկզբնական պատկերի այցելութիւն անողները այն օգուտ կարող են ունենալ որ մի քանի փոքր մասնաւոր և հետաքրքրելի նիւթերը այս դրութեան մէջ աւելի աչքի տակ են ընկնելու քան թէ այն ժամանակ երբ բոլորովին կարգ դրած շատ հեշտութեամբ ընդհանուր տպաւորութիւնից յափշտակուած քննողի աչքից կարող են ծածկուել։—Հիմայ տեսնում է իւրաքանչիւր ժամումն շատ նոր նիւթերի ստեղծումն այս աշխարհին մէջ, ուր երեկ այստեղ թափառողը նստած հանդստանում էր, այսօր տեսնում է կամ մի ամերիկացու վրանի բացուիլը, կամ յունաց եկեղեցու նոր հիմնելը, կամ մահմեդականաց սուրբ աղբիւրների համար տեղ փորելը և այլն, մի խօսքով մարդկային գիտութեանց և արուեստից ոյժը հրաշքներ է գործում։—

Աւստրիան, Իտալիան, Բելգիան, Շվէյցարիան և ուրիշ մի քանի տէրութիւնները մասամբ պատրաստ են։ Այցելութիւն անողներին այժմ դրավում է առանձնապէս Շվէյցարիայի և Բելգիայի մասերը, այս երկիրները թէև փոքր, բայց ոչ մի ճիւղի մէջ ուրիշ երկիրներից հետ չեն մնացած և մի քանի ճիւղի մէջ շատ մեծ տէրութիւններից բարձր են։ Շվէյցարիան ինչպէս իր մանկավարժական մասումը շատ ուսուցչաց և ծնողաց հետաքրքրելի առարկայ է դարձած, նոյնպէս և արիւնահեղ պատերազմների մէջ քաջ յայտնի իր մարդասիրական ընկերութիւններից ներկայացրած ու կատարելագործուած վերաբուժական գործիքներովը իւրաքանչիւր այցելուի վրա մի աղնիւ ազդեցութիւն է թողնում. քանի՞ հազարաւոր ընտանեաց այս երկու ճիւղերով Շվէյցարիան կեանք ու մխիթարութիւն է տուել առանց նոցա ազգութեան և կրօնքի զանազանութեանը նայելու։—

Բելգիան ցոյց է տալիս թէ մի ժողովուրդ որ ազատութեան, գիտութեան և արուեստի պաշտօնակալ է ինչին է ընդունակ, չը նայեցեալ որ իր երկրի տարածութիւնը այնպէս սահմանափակուած է։ Ժողովրդի դիտութեամբ և եռանդով այդ փոքր տեղից այնքան հարստութիւններ է ներկայացնում որ իրանից տասն անգամ մեծ երկիր ունեցող տէրութիւնների հետ մաքառումէ և շատ բանի մէջ մի քանիսից էլ գերազանցում է, մանաւանդ գործարանաց և արհեստաց կատարելագործութեամբ։ Այս երկրի մէջ մի երևոյթ մինչև հիմայ մեծ ուշադրութիւն է դարձնում, այն է որ Բելգիայի ուսումնական մասի ներկայացնողը մի հոգևորական դասին պատկանող անձն է որ մեծաւ բարեկանութեամբ և գործի ապահովութեամբ գիտութեանց իւրաքանչիւր ճիւղի վերայ այցելուներին բացատրութիւններ է տալիս։—Զանազան ազգերի ուխտաւորները ոմանք զարմացմամբ և ոմանք նախանձով մտիկ են տալի այն հոգևորական անձնի գործունէութեան վրա. Պատահեցաւ ինձ մի անգամ այս մասումն մի մեր ազգակցի հետ անցկենալու և ինչ յիշողութիւն մեր հայրենիքից ու ազգից մեր մէջ զարթեցաւ,—կարդացողին նոր բան չեմ պատմի այստեղ կրկնելովս։

Շվէյցարիայից և Բելգիայից յետոյ մինչև էսօր ամենակարգին ընկածը աշխարհանդէսի մէջ Աւստրիան է դալի, որ իր երկրի պատմական յիշատակներովը ստիպում է մարդուն նրա վրա յարգանօք նայել։ Ով չի ճանաչում պատմութեան մէջ Աւստրիայի դրութիւնը 1866 թուականից առաջ, երբ նա իր ուշքն ու միտքն ուրիշ ուղղութեան էր դարձրել, երբ նա իր աչքը պտոյտ էր տալի իր երկրի չորս կողմն և նոր միջոցներ էր պատռտում իր տէրութեան սահմանը ընդարձակելու, երբ նա դարձած էր իր զինակիր և պաշտպան Պապականութեան կրօնամոլական ձգտումներին, երբ նա անցաւոր փառքի ու պատուի հետևիցն էր ընկած։ Բայց ինչպէս մարդկային պատմութիւնից երևում է թշուառութիւնը ու դժբաղդութիւնը մարդկային շատ ազգերին մեծ ուսում է աւանդել։ 1866-ին զարթայրուց Պրուսիան իր քրոջ Աւստրիային մի անքաղաքավարի ու սոսկալի ձևով. այս արթունքից յետոյ մինչդեռ Աւստրիացիք ախ ու վախ էին քաշում ու ազգերի մեծ մասը նրա ցաւին խօսքով ու գրով մասնակից էին լինում, լուսոյ ու գիտութեան ոգին տոնախմբում էր, նա ուրախանում էր որ մի հետևողի թիւը աւելանում է, նրան յայտնի էր որ մի օր 66 թուին ողբացող ու յաղթուած Աւստրիան վրէժխնդիր կը լինի. կը մաքառի ազնիւ ձևով իր քրոջ հետ և որ 66 թուի պատերազմական օրերը անջնջելի, ազնիւ յիշատակաց արժանի օրերի են փոխադրուելու իր պատմութեան մէջ։ Իրաւի հիմայ Աւստրիան շատ առաջ գնացած է երևում այն հանդիսին մէջ։ 66-ից յետոյ Աւստրիան իր ուշքն դարձրած լինելով իր սեպհական ներքին տէրութեան վրա, աւելի օգուտ քաղեց քան թէ նրան բերում էր զուռով տիրապետած Իտալիոյ մի մասն, Ցունդարիայի ծառայութիւնը, գերմանական Ֆրանկֆուրտ դաշնադրութեանց մէջ առաջին տեղն ունենալն և կամ սուրբ Պապի անընդհատ աղօթքներն ու օրհնական կոնդակները և այլն. նա իմացաւ որ մի ազգի ոյժն իր մէջից պէտք է լինի և որ գիտութիւնը միայնակ ոյժն ու զօրեղութիւնն է։

Աւստրիայի բարոյական ու նիւթական ոյժը այն աշխարհանդէսի մէջ շատ ազդաց զարմացումն և բարի նախանձ պիտի յարուցանէ։—

Աւստրիայի կողքին գլուխ է հանում նորա հետ եղբայրացած Ցունդարիան, նա էլ ուզում է ցոյց տալ որ եւրոպական արհեստից մէջ հետ չէ, որ իր ազատութիւնը ու արտօնութիւնները Աւստրիոյ կայսերութեան մէջ ոչ թէ զէնքի ոյժին է պարտական, այլ գիտութեանց և արուեստից, վերջիններով միայն ստիպել է իր ստրկացնողին ազգային ազատութեան և եղբայրական դաշնադրութեանցը ստորագրելու.

Ռուսաստանի վերայ արհեստական պալատի մէջ առ այժմ ոչինչ չեմ կարող ասել, որովհետև նա դեռ կարգի դցած չէ այժմ, ինչպէս և Անգլիան, Ֆրանսիան ու Ամերիկան, որ նոր է մտածում իրան զինուորելու խաղաղութեան զէնքով։ Ռուսաստանի մասը մեզ այս աշխարհահանդէսի մէջ մի մխիթարութիւն է տալի որ ուրիշ աշխարհահանդէսների մէջ չունէինք, գուցէ տեղի սակաւութեամբ. Կովկասը իր արհեստական ու բնական բերքերով մի առանձին կրկնաբաժանմունք է ստացել ուր միայն Կովկասեան կողմի արհեստները ու բնական բերքերն են ներկայացրած։ Սրա օգուտ այն կարող է լինել, որ մինչդեռ առաջուայ աշխարհահանդէսներումն մեծ Ռուսաստանի արհեստների և

բերքերի մէջ խառնվում ու կորչում էին, այժմ առանձին կարող է օտարաց ուշքը գրաւել ու մեր երկիրն էլ զանազան հետաքրքիր անձանց ուսումնասիրելու առարկայ դառնալ։

Արևելեան տէրութիւնները — Տաճկաստանը, Պարսկաստանը, Չինաստանը, Եապոնիան և այլն, այս աշխարհանդէսի մէջ մեծ տեղ են բռնում և մեծ պատրաստութիւնների վերա են, բայց առայժմ ոչինչ չէ կարելի ասել, որովհետև այս երկիրների մեծ մասը քողով են ծածկուած, միայն լսվում են չաքուչների ձայները և երբեմն երևումեն այստեղ այնտեղ չինացի, եապոնացի կամ Տաճկաստանի մշակները Վիէննայի մէջ։—

Ուրախալի է որ Տաճկաստանի և Պարսկաստանի ներկայացողների մէջ Հայ անձինք էլ են խառնուած։ Պարսկաստան երկրի Վիէննայի աշխարհանդէսի մէջ ներկայացնող մի պատուական հայերէն, դաղղիերէն և ռուսերէն հասկացող Հայ ազգի իշխանն է։—

Կարծեմ աւելորդ չի լինի մի քանի խօսք ևս Վիէննայի նկատական կարեաց արժէքների վրա, որի թանգութեան լուրը աղ աշխարհքի վրա տարածուեցաւ և շատերի միտքը փոխեց Վիէննա գալու։ Ցիրաւի ամսոյս սկիզբները մեծ թանգութիւն էր թէ բնակարանների և թէ ուտելիքների և խմելեաց, բայց վիէննացիք շուտով նկատեցին իրանց սխալմունքը, տեսան որ օտար հիւրերը վախենալով Վիէննայից ստացած լուրերով չեն գալի, իսկ մի անգամ այստեղ ընկած ու սովոր օտարներն էլ չեն նեղանում մի քառորդ կամ կէս ժամ կորցնելու և էժան հիւրանոցներումն ճաշելու ու բնակուելու, հարիւրաւոր հիւրանոցներ չը նայելով իր արած օրական մեծ ծախքերի ամբողջ օրը մի հիւր չէ ընդունում, ծառաները (կէներները) պարապ ձեռքը ջիբում իզուր հիւրատէրից փող ու ապրուստ էին ստանում և չուացնելով դռնից կամ պատուհանից սպասումէին մի մոլորեալ օտարականին որ սխալմամբ իր փողի քըսակը նրանց թափ էր տալ տալի։ Քաղաքիս կառավարութիւնը և լրագիրները ակսեցին իրանց գործունէութիւնը, որին ստիպելով, որին համոզելով հասկացնել որ այս թանգութիւնը իրանց դժբաղդութիւն է, որ սրա վերջը այն կը լինի որ այս աշխարհանդէսը միայն վիէննայեցւոց համար կը դառնայ և հարիւրից մէկն օտարական կը մնայ կամ կը գայ այստեղ իր փողերը մխսելու. շատ չը ուշացաւ այս տեսակ վարմունքը. քաղաքային վարչութեան և մանաւանդ լրագիրների ազդեցութիւն այն արաւ, որ երեք չորս օրից յետոյ բնակարանների գիները վեր ընկան նոյնպէս և ուտելեաց ու խմելեաց. այժմս կարելի է մի մարդու համար բնակարան գտնել օրէնը մի ֆիորինով *) ամսական 15—30 ֆիորինով, մի պորցիայ սուպը արժի հիմայ գրեթէ ամէն տեղ 8—20 Աւստր. կրէյցեր. մսեղէն կերակուրները, կարտոֆիլով կամ ուրիշ բանով միասին պորցիան արժի 35—90 կրէյցեր Աւստր. մի մեծ բաժակ գարեջուր 12—15 կրէյցեց, մի մեծ չիչ սովորական ճաշու գինին 50 կրէյցր. մինչև մի ֆիորին, մի մեծ թաս կաֆէն 18—25 կրէյցեր կաթով կամ սերով. մի գրուանքայ **) տաւրի միս 30—40 կրէյցեր, մի գրուանքայ ալիւր 10—15 կրէյցեր և այլն և այլն։

Վերոյիշեալ գիները հաղորդում եմ որովհետև մասնաւորապէս հենց գերմանացի ծանօթներից էլ անգամ նամակով յայտնել էին ինձ իրանց երկիւղը Վիէննայի թանգութիւնից, և ինչքան մեզանումն պէտք է լինի, մանաւանդ այն անձանց համար որոնք նպատակ ունեն այս աշխարհանդէսից օգուտ քաղելու իրանց առարկայումն։

Մի խորհուրդ մեր հայ երիտասարդ ուխտաւորներին. թող նրանք Վիէննայ հասնելուն պէս տեղեկանան այստեղ գտնուող մեր կողմի Հայ երիտասարդաց և մանաւանդ Հայ ուսանողաց հասցէները և նրանց խորհրդի դիմեն. այս օտար տեղումն կարծեմ, կարող եմ ասել, որ մեր Գերմանիայի ուսանողները որոնց մեծ մասը երևի այս աշխարհանդէսին այցելութիւն կանէ և բաղդաւորապէս մեծ թիւ է կազմում, ուրախ կը լինեն կարելին չափ խորհրդով և գործով օգնական լինելու, մեր հայկական այն դասին որնոր միայն ուսման և իրան կոչումի մէջ կատարելագործուելու նպատակով այստեղ ուխտ կը կատարեն ու ցանկալի է որ այսպիսի ուխտաւորների թիւը մեծ լինի. գտնէ այս մեծ ուսումնարանից հայն էլ մի քան սովորի։

Բ. Թ.

*) Ծանօթ. մի թուղթ ռսի ռուբլին այժմ արժի Աւստրիայի ֆիորին և 45—48 Աւստրիայի կրէյցեր. Մի Աւստրիայի ֆիորին ունի 100 կրէյցեր, մի ռսի կոպէկն մօտ մի կրէյցեց և կէսն է Աւստրիացւոց փողով։

**) Աւստրիայի գրուանքան մեր գրուանքից մեծ է։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Սղնախում կայ մի եկեղեցի սուրբ Նինուէ անունով. այն եկեղեցւոյ վերա փորած է մի կշիռ որի մի թաթում դրած է մի կտոր արդարութիւն, իսկ միւս թաթից կախուած հաղարաւոր սատանաներ քաշում են կշռին, բայց արդարութիւնը մնում է իրա ծանրութեան մէջ անշարժ։

***

Տփխիսում ցանկանումեն բաց անել առևտրական դատարան և այդ պատճառաւ մայիսի 24-ին ժողովվել էին քաղաքական կառավարութեան դահլիճը քաղաքից ընտրուած պատգամաւորներ դատարանի նախագիծը քննելու համար հարկաւոր էր որ այն նիստում քննէին և այն թէ ժողովուրդի որ դասից կարող են լինել անդամներն։ Որովհետև պատգամաւորների մէջ կային իրաւաբաններ, ուստի սոքա կարծում էին որ անդամներն անկասկած պէտք է լինեն իրաւաբաններից, ծառայողական մասը, որ իրա աշխատութեամբ հասել էր ծառայական պաշտօններին, կարծելով որ իրաւաբաններից շատերը ստանալով դիպլոմ միայն արքունական ծառայութեան մէջ մի արտօնութիւն են ժառանգել, բողոքում էր իրաւաբանների կարծիքի դէմ, ասելով որ իրանց դասից աւելի յարմար է անդամներ ընտրելը։ Երրորդ դասը փաստաբանները իրանց փաստաբանական ճարտարութեամբ պաշտպանում էին իրանց իրաւունքը անդամ լինելու համար։ Չորրորդ—վաճառականական դասը՝ զարմանալով այդպիսի կարծիքների վերա կոչումէր՝ մեր դատարանը վաճառականների համար է, և թէ նոցա կեանքի, գործերին, հաշվատարութեան ծանօթներն վաճառականներն են, ուրեմն նոքա պիտի լինեն դատաւոր իրանց դատարանի մէջ։

***

«Մշակի» խմբագրութիւնը շնորհակալութեամբ ստացաւ գեր. Արիստակէս վարդապետ Սեդրակեանցից իր աշխատութիւնը՝ «Հնութիւնք Հայրենեաց ի գաւառին Երնջակու»։

***

Այժմ գրականութեան մէջ շատ են խօսում Ուիլիէմ Սորնտրն (William Thornton) անգլիացու մի նոր փիլիսոփայական շարադրութեան մասին։ Առաջ նա յայտնի էր Եւրօպայում մանաւանդ իր «Աշխատանք» անունով գրքով։—Գուցէ հետաքրքրելի է իմանալ մեր տիկնանց, որ այդ երևելի անգլիացու մայրը՝ հայուհի էր։

***

Վիէննայից գրում է մեզ պ. Բ. Թ. որ խօսք կայ թէ Վիէննայի աշխարհանդէսը բաց է մնալու մինչև հոկտեմբերի 31-ը 1873 թուի։

***

«Մասիս» լրագիրը հաղորդում է Կ. Պոլսից՝ այս առաւօտ ժամ լինին միջոցները Բերայի չիտակ ճանրան թէքկէին մօտ հրդեհ պատահելով, 80-ի չափ տուն և խանութ այրեցան։

***

Նոյն լրագրի մէջ կարդումենք՝ Վիէննէն եկած վերջին լուրերը քօլէռային բոլորովին դադրած ըլլալը կը հաստատեն։ Բէշիկի մէջ ալ բռնուողներուն թիւն օր քան զօր նուազելով, օրը տասնի իջած է։

ՏԵՂԵԿԱՏՈՒԹԻՒՆ

ՓՕՍՏԸ. Ռուսաստան և Արտասահման ամեն օր, բացի կիրակի օրից։ Երկուշաբթի. Քութայիս, Զէրնօմորի վիճակ, Սուխում, Երևանի գաւառ։ Երեքշաբթի. Բագու, Գանձակ, Դաղստանի նահանգ (թեթև փոստը)։ Չորեքշաբթի Քութայիս և Ալէքսանդրապօլ։ Ուրբաթ Քութայիս, Երևան, Նուխի, Զաքաթալ, Ախալցխայ։ Շաբաթ. Բագու Գանձակ (ծանր փոստը)։

—

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ Գնումէ ամեն օր՝ խառն գնացքը առաւօտ 9 ժամին 25 րոպէ։ Ճանապարհորդների գնացքը երեկոյեան 9 ժամին 30 րոպէ։ Գալիս է՝ կէս օրից յետոյ 4 ժ. 47 ր. և երեկոյեան 11 ժ. 40 ր.

—

ՀԻՒԱՆԴԱՆՈՑԸ երթևեկ հիւանդների համար գտնվումէ Ս. Նշան եկեղեցու մօտ Եաղոր Ղարաքիլի տանը և բաց է ամեն օր հիւանդների ընդունելութեան համար առաւօտեան 9 ժամից մինչև 1 ժամը կէսօրից յետոյ։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԹԻՖԼԻԶԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(Յունիսի 6-ին)։

ՈՍԿԻՆ, (պօլուիմպէրիալ) . . .	6 ռ.	8	կ.
ԲԱՄԲԱԿԸ Երևանու.	4 „	50	„
„ երկրորդ տեսակը . .	4 „	45	„
„ Ամերիկաի սերմից .	6 „	50	„
ԲՈՒՐԴԸ Թուչի	6 „	50	„
„ „ երկրորդ տեսակը	6 „	—	—
„ Թարեքեամի	5 „	—	—
ՇԱՌԱՐԸ Ռսի (Բրօցկու)	7 „	40	„
„ „ միւս տեսակը . .	7 „	30	„
„ զաղրանիցու տրանցիդ.	5 „	10	„
մաքսը վճարած	8 „	25	„
ՇԱՌԱՐԱՒԱԶԸ Ռսի.	6 „	30	„
ՂԱՀՎԱ Լիվանի լաւը.	15 „	—	—
„ Մօկո, շատ լաւը . . .	17 „	50	„
„ Մարտինիկոի, ցածրը .	14 „	—	—
ԱԼԻՒՐԸ Երևանի առաջին տեսակը	1 „	40	„
„ „ երկրորդ տեսակը	1 „	30	„
ԱԼԻՒՐԸ Գեանջու հասարակ . .	1 „	60	„
„ Շորագեալու	1 „	60	„
ԳԱՐԻՆ Երևանի.	— —	90	„
ՊՂՊԵՂԸ	11 „	—	—
ՇԻՐԲԱԽՏԻ ՃԷԹ.	10 „	60	„
ՄՈՄ	12 „	—	—

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(Յունիսի 6-ին)

ՓՈԽԱՆԱԿ. բարթ պօլս. . . վճ. . .	6—70
„ „ Թաւրիզում վճ. . .	4—70
ՄԱՐՍԷԼ և Փարիզ, 100 ռուբլին ածէ.	341½ ֆր.
ԼՕՆԴՕՆԻ վերա, (Օդէսայի կուրսը) 7 ռուբլի 41½ կոպէկը ածէ. . . .	1 լիրա
ՄԱՐՍԷԼՈՒՄ բամբակի 50 քիլօ 3 փութ 2 գրվ.) ծախվումէ	76 ֆր.
(ՄԱՐՍԷԼՈՒՄ Երևանու Ամերիկ. սերմի բամբակը ծախվումէ .	90 ֆր.
„ առաջին տեսակը	60 ֆր.
„ երկրորդ տեսակը	50 ֆր.
ՄԱՐՍԷԼՈՒՄ Թուչի սպիտակ բուրդը ծախվումէ	95 ֆր.
„ երկրորդ տեսակը. . .	92½ ֆր.
„ գառան բուրդը ածէ . .	105 ֆր.
„ Թարաք. բուրդը ածէ . .	70 ֆր.
„ Ղարաբ. բուրդը ածէ . .	55 ֆր.
„ երկրորդ տեսակը. . .	50 ֆր.

ԿՕՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՑ խարջ Նուխվայ թեղն (մետաքրը) շատ ընտիրը 146 ռուբլի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(Մայիսի 26-ին)

ԼՕՆԴՕՆ.—մի ռուբլի ածէ 32 7/32 պէնս (փոխանակ 40 պէնս)։

ՓԱՐԻԶ.—մի ռուբլի ածէ 342 սանտիմ (փոխանակ 400 սանտիմ)։

Առաջին ներքին 5% փոխառութեան տոմսակ		—
երկրորդ		—
5% Բանկի տոմսակ	„ 1 շրջանի	—
„ „	„ 2 շրջանի	95 3/8
„ „	„ 3 շրջանի	—

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Յակոբ Վանցեանցի ժառանգները պատիւ ունին յայտնելու ինչպէս օտարաքաղաքացի, նոյնպէս և օտարերկրացի վաճառականներին, որ Յուլիսի 25-ից 1873 թուի նրանք բաց անելու են առանձնակարգ Գործակատարութիւն ապրանքների տեղափոխութեան „Правдолюбецъ“ (պրավդոլիուբէց) ֆիրմայով.—Թիֆլիսում, Փօթիում, Պօլսում, իսկ օդոստոսի 25-ից և Մարսէյլում։ Վանցեանցի ժառանգները բոլոր միջոցները գործ են դնում ապրանքների շուտ տեղափոխութեան համար, կատարեալ երաշխաւորութեամբ, որ ամենքը որք բարեհաճեն դիմել յիշեալ գործակատարութեանը յանձնարարութիւններով, ամեն կողմից բաւական կը մնան իրանց ապրանքների շուտ և ճիշդ տեղափոխութեան մասին, մատչելի գներով։

Գլխաւոր գործակատարութիւնը գտնվելու է Փօթի քաղաքում, կառավարութեամբ Տիգրան Յակոբեան Վանցեանցի։

Ծառանգներ—եղբայրներ Տ. Գ. և Ա. Վանցեանց։

Մամուլի տակ մտաւ „Մեծ մարդերի պատմութիւններ“ անունով թարգմանական աշխատութիւնը։ Խնդրում եմ դարձեալ Հայ-պարոններից չինայել իւրեանց դրամական օգնութիւնը։

Գրիգոր Տէր-Մելիքսեդեկեան։

Յանկանում են փոխ առնել 5 հազար ռուբլից մինչև 10 հազար ռուբլի, վճարելով մինչև 12 պրոցէնտ շահ, քաղաքի անշարժ կայքի հաստատ գրաւականով։ Հարցնել „Մշակի“ խմբագրութեան մէջ։

Իմ աշխատասիրած „Մայրենի լեզուի“ Ա. տարին արդէն սպառուած լինելով և նորա երկրորդ տարին էլ պատրաստուած, ես շուտով սկսելու եմ նոցա տպագրութիւնը պատկերներով և գծագրութեան օրինակներով։ Այդ որովհետև պատկերների փորագրութիւնը թիֆլիսում շատ թանկ է նստում, ուստի ստիպուած եմ դիմել մեր Ազգային Ուսումնարանների վարչութեանց, առաջարկելով նոցա, եթէ կ'բարեհաճեն, նպաստել գրքերիս տպագրութեան, ձեռնտու պայմաններով կանխաւօրէն գնելով իրանց ուսումնարանների համար երկու գրքերից մի անգամից 100 մանէթի առնողին 20% զեղչումն կ'լինի. իսկ այն գրավաճառները կամ ուսումնարանները, որոնք կանխապէս կը գտնեն ոչ պակաս քան երկու հարիւր մանէթի 25% զիջումն կ'ստանան։ Ստացած փողերի համար կարուի ստացագիրը։ Գրքերը պատրաստ կ'լինեն սեպտեմբերին և պատկերազարդ տպուելուց յետոյ կ'ծախուին 45 կ.

Իմ հասցէն. Тифлисъ.

Николаю Тер-Гевондіанцъ

Въ домѣ Могнинской Церкви.

Նորերումս դուրս եկաւ և ծախվումէ Վ. Շահվերդեանի «ՆԿԱՏՈՂԱԿԱՆ ՈՒՍՈՒՄ» անունով սկզբնական գործնական ձեռնարկը տարրական ուսումնարանների համար. գինն է 50 կ.։—Ձանապարհի ծախսը հեղինակի վերայ է։ Ծախվումէ Թիֆլիսի գրավաճառանոցներում և պ. Ռ. Աբովեանցի խանութում, Կուկիայի կամուրջի վերայ։—Օտար քաղաքացիները կարող են սպանալ ուղղակի հեղինակից այս հասցէով. Тифлисъ Василію Шавердову, въ редакцію газеты „Мшакъ“.

Գիրքը բաղկանումէ 8 վեցածալ թերթերից. բնագիրը, բացի յառաջաբանից և ցանկից, բաղկանումէ 176 երեսից և 101 յօդվածներից զանազան ծանօթութիւններով։ Գրքի բովանդակութիւնը։

Առաջի մասում) ուսուցանելու եղանակը բ) դասատան մէջ գտնվող առարկաների հետ ծանօթութիւն. գ) նախընթաց կրթութիւնների մէջ նկարագրած առարկաների համեմատութիւնը (նմանութիւն և զանազանութիւն). բնական պատմութեան սկիզբը դ) ընտանի կենդանիներ, ե) վայրենի կենդանիներ։ զ) այս կենդանիների համեմատութիւնը միմեանց հետ (նմանութիւն և զանազանութիւն). թռչուններ, ը) սողուններ և ձկներ. թ) միջատներ, ժ) մարդ, ի) ծանօթութիւն հայրենիքի հետ։

Երկրորդ մասում. խառն հատուածներ ընթերցանութեան համար. այս մասը բաղկանումէ 33 յօդվածներից։ Այս յօդվածների բովանդակութիւնը վեր առած է երեխայի շրջապատող կեանքից և բնութենից։

Дозволено Цензурою. Тифлисъ, Іюня 6 1873 г.

Մէլիքովի և ընկ. տպարան

Խմբագիր—հրատարակող Գրիգոր Արծրունի